



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 19 ԱՊՐԻԼ, 2021

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 119

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել,  
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:  
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.  
մի՛ ձգեր որ պատուէրներէդ խոսորդիմ:  
Խօսքդ սրտիս մէջ պահեցի,  
որպէսզի չըլլայ որ քեզի դէմ մեղանչեմ:  
Օրհնեալ ես դուն, Տէ՛ր,  
սորվեցուր ինձի քու կանոններդ:  
Շրթունքներս անդադար պիտի կրկնեն  
բերնէդ դուրս եկած ամէն մէկ վճիռ:  
Հաճոյք կ'առնեմ պատուիրաններդ կապարելէն,  
բոլոր տեսակի հարստութիւններէն աւելի:  
Հրահանգներդ են մտածումիս առանցքը,  
ուսուցումներդ՝ ուշադրութեանս առարկան:  
Կանոններդ են ինձի հաճոյք տուողը,  
եւ խօսքերդ բնաւ պիտի չմոռնամ:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուրք Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի փան, ի գնայ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



## ԱՌԱԿԱՑ

### ԱԲԵԼԻ ԶԳՈՒՇԱՅՈՒՄ (7:1-27)

Դարձեալ նոյն վերաբերմունքով, կ'ըսէ. «Որդեակ իմ, պահէ իմ խօսքերս, պապութիւններս», ինչո՞ւ. «որպէսզի ապրիս»: «Ապրիս»-ը, յաւիտենապէս ապրելու մասն է, այիսնքն որպէսզի գեղեցիկ, յաւիտենական փանջանքի ենթակայ չըլլաս: Իսկ ի՞նչ ձեռով պահես. «աչքի բիբի պէս պահես, մաքնէրուդ վրայ կապես, սրբիդ փախարակին վրայ գրես»: Այնքան որքան կարելոր է աչքի բիբը, փեսնելու համար, չըլլայ թէ յանկարծ գրկուի՞նք, նոյնպէս ալ Աստուծոյ Օրէնքը, պապութիւնը նոյնքան է աւելի կարելոր ու անհրաժեշտ է փեսնելու համար: Մաքնէրուդ վրայ կապես, այն մաքնէրով որ գործ կ'ընենք, այդ մաքնէրը առաջնորդուած ըլլան Աստուծոյ պապութիւններով: Նաեւ ինչպէս որ մաքնէրը կ'օգտագործուին մաքանի դրուելու, թող այդպէս ալ Աստուծոյ պապութիւնները իբրեւ զարդարանք ըլլան մաքնէրուդ համար: Տակաւին, ինչպէս պսակ ամուսնութեան մաքանին երկու արձերու միջեւ, է մնայուն յիշեցում իրարու կապուած ըլլալու հանգամանքը, նոյնպէս ալ Աստուծոյ պապութիւնները մեզ Իրեն միացնելու Իրեն հաւաքարիմ ըլլալու հանգամանքը: Ի վերջոյ սրբիդ փախարակին վրայ գրես, այսինքն՝ մտածումներուդ առարկան ըլլան Աստուծոյ պապութիւնները, խորհուրդներդ անով առաջնորդուին: Փոխանակ այնպէս արձանագրուած ըլլալու մեղքը, ինչպէս պիտի ըսէ Տէրը Երեմիա մարգարէին. «Յուդային մեղքը երկաթէ գրիչով ու աղամանդի ծայրով գրուած է, անոնց սրբին փախարակին վրայ փորուած» 17:1: Մանաւանդ ամուր պահես, որպէսզի չըլլայ թէ չարը գայ է գանոնք իւր, ինչպէս պիտի ըսէ Քրիստոս նմանցնելու սերմնացանին առակին մէջ այն հունքերուն որոնք ճամբու եզրին ինկան է թռչունները գալով կերան: Յաճախ նաեւ Աստուծոյ պապութիւնները եթէ ըստ այնմ ամուր չպահենք, կեանքի դրուածքը, փորձութիւնները կրնան գալ ու խլել մեզմէ այդ պապութիւնները է մեզ ծուղակը ձգել:

Հերաքրքրական արտայայտութիւն մըն է երբ կ'ըսէ. «Իմաստութեան ըսէ. «Դուն իմ քոյրս ես», ու հանձարը «բարեկամ» կոչէ»: Այնպէս ինչպէս երբասարդ մը արժանապապութեամբ կը պահէ իր քոյրը ու քոյր պարիւր, նոյնպէս ալ Աստուծոյ պապութիւնը այդպէս զգուշութեամբ է ամենայն բժախնդրութեամբ պահելու, է զայն առնելու է ունենալու որպէս բարեկամ, հարազատ: Այս բոլորը, որպէսզի հեռու պահեն օտար կնոջմէն: Այլ խօսքով, Աստուծոյ պապութիւնները, որպէս սպառազինութիւն, դէմ դնելու համար Չարին արձակած բոլոր փեսակի միացող նեպերուն:

Խորքին մէջ, այսպէս, այս հապուածին մէջ ցոյց կու տայ, թէ ինչպէս իմաստութիւնը կ'օգնէ մարդս որպէսզի զանազան է հեռու մնայ պոռնկութենէ, ու անոր պարբաստած թակարդէն: Որովհետեւ այնպիսի թակարդ կը լարէ, որ ծուղակը իյնայ որսը: 6-23 համարները նախ կը ներկայացնեն այն երբասարդը որ պակասամիտ է, այս պարագային իմաստութեամբ է Աստուծոյ պապութիւններով չառաջնորդուիր: Երկրասարդ մը, որ փակաւին ծանօթ չէ աշխարհի դրուածքին: Չարը այսպիսի անձեր կը փնտրէ որպէս որս: Հերաքրքրականօրէն իրիկուն եղաւ է գիշերուան մուրը փիթեց, այսինքն ընելու այնպիսի բաներ, որոնք կարելի չէ ցերեկով ընել, կամ լոյս եղած փեղը: Ի՞նչպէս պիտի ըսէ Քրիստոս, անոնք խաւարը աւելի սիրեցին, որովհետեւ անոնց գործերը չար էին: Գիշերուան մուրը փիթեց, այսինքն նոյնիսկ լուսնի լոյսն ալ չըլլալու, որպէսզի յանկարծ չյայտնուի: Հինգերորդ գլուխին մէջ յիշեցուցած էր որ անոր փան մօտէն իսկ չանցնիս, այսպէս, ընդհակառակը, անոր փան ճամբան փռնեց, անոր փան քովէն կ'անցնէր: Երկրորդ, կը ներկայացնէ օտար կնոջ կերպարը, սկսեալ անոր արտաքինէն փեսքէն, անոր նկարագրէն, կենցաղէն, արարքէն, խաբէբայական խօսքերէն, ապահովեցնելու երկրասարդին որ վիճակով ալ լաւ է, որովհետեւ նոյնիսկ խաղաղութեան, այսինքն շնորհակալութեան գոհ ալ ընծայած է, այսինքն երբասարդը չմտածուի իր գրպանէն ծախսելու, առաւել էս, բարեպաշտական վիճակը, որպէս թէ բարեպաշտ է, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ արտաքնապէս բարեպաշտ են, բայց խորքին մէջ չեն հաւաքար աստուածապաշտութեան գործութեան: Տակաւին, ներկայացնելով ու հրապուրելով փան վիճակը, ու մանաւանդ ըսելով. որ «ամուսինս փունը չէ», այսինքն ազատ են: Ապա կը ներկայացնէ երբասարդին վիճակը, որ կը նմանի, սպանդանոց փարուող արջառին, պարժուելու գացող յիմարին, կապուած շան, լեարդէն վիրաւորուած այծեամին, թակարդը ինկած թռչունին:

Անգամ մը էս կը յիշեցնէ ըսելով. «Որդիներ, մտիկ ըրէք, ու իմ խօսքերուս ականջ դրէք, որպէսզի չըլլայ թէ անոր ճամբաներէն երթաք, որովհետեւ անիկա շարքերը խոցոյրեց ու կործանեց»: